4. Նկարում պատկերված է a ուղիղ, որն ուղղահայաց է α հարթությանը: Այդ դեպքում a ուղիղն ուղղահայաց է.

- 1) Միայն b և d ուղիղներին
- 2) Միայն f ուղղին
- 3) Միայն c և e ուղիղներին
- 4) Պատկերված բոլոր ուղիղներին
- 5) Միայն b ուղղին



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Տարածության մեջ ուղղահայաց ուղիղները կարող են լինել ինչպես հատվող, այնպես էլ խաչվող:
2. Ուղղի և հարթության ուղղահայցության հայտանիշը:
3. Ուղղի և հարթության ուղղահայցության հայտանիշը, ինչպես նաև խորանարդի նիստերի քառակուսիներ լինելը: 4. Ուղղի և հարթության ուղղահայցության սահմանումը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Շրջակայքում առկա առարկաներով պատկերել ուղղահայաց ուղիղների (հատվող և խաչվող) մոդելներ:
2. Լրացնել ուղղի և հարթության ուղղահայացության հայտանիշի մեջ բաց թողնված բառերը:
3. Կիրառել ուղղի և հարթության ուղղահայցության հայտանիշը: 4. Կիրառել ուղղի և հարթության ուղղահայցության սահմանումը:

8.1. Կետի և հարթության հեռավորությունը

թեմատիկ պլան


Առաջադրանք առարկայի չափորոշչային **նվազագույն** պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ:
 - 1) α հարթությանը չպատկանող A կետից α հարթությանը կարելի է իջեցնել անթիվ ուղղահայցները:
 - 2) α հարթությանը չպատկանող A կետից α հարթությանը կարելի է տանել անթիվ թեքեր:
 - 3) α հարթությանը չպատկանող A կետից α հարթությանը կարելի է իջեցնել միայն մեկ ուղղահայաց:
 - 4) α հարթությանը չպատկանող A կետից α հարթությանը կարելի է տանել միայն մեկ թեք:

2. Հարթությունից դուրս տրված կետից հարթությանն իջեցրած ուղղահայցը.
 - 1) Մեծ է նույն կետից այդ հարթությանը տարված ցանկացած թեքից:
 - 2) Հավասար է նույն կետից այդ հարթությանը տարված ցանկացած թեքին:
 - 3) Փոքր է նույն կետից այդ հարթությանը տարված ցանկացած թեքից:


3. Ըստ տրված գծագրի կազմել համապատասխանություն:

	AB
Ուղղահայաց	BO
Թեք	AO
	OC
Թեքի պրոյեկցիա	AC



4. Կետի հեռավորությունը հարթությունից ասելով՝ նկատի ունենք. 1) Այդ կետից տվյալ հարթությանը իջեցրած ուղղահայացը: 2) Այդ կետից տվյալ հարթությանը իջեցրած որևէ թեք:
- 5.

α հարթությանը չպատկանող A կետից այդ հարթությանը տարված AB թեքի երկարությունը 10 սմ է, իսկ այդ թեքի պրոյեկցիայի երկարությունը՝ 6 սմ:



Գտնել A կետից այդ հարթությանը տարված ուղղահայացի երկարությունը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հարթությանը չպատկանող կետից տարված ուղղահայացի և թեքերի քանակի մասին:
2. Նույն կետից տարված ուղղահայացի երկարությունը փոքր է կամայական թեքի երկարությունից:
3. Հարթությանը չպատկանող կետից հարթությանը տարված ուղղահայացի, թեքերի և նրանց պրոյեկցիաների ճիշտ պատկերումը:
4. Կետի հեռավորությունը հարթությունից հասկացության սահմանումը:
5. Ուղղահայաց, թեք, թեքի պրոյեկցիա հասկացությունները, ինչպես նաև Պյութագորասի թեորեմը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.


1. Հարթությանը չպատկանող կետից տարված ուղղահայացի միակության մասին իմանալով՝ կատարել ճիշտ եզրահանգում:
2. Համեմատել նույն կետից տարված ուղղահայացի ու կամայական թեքի երկարությունները:
3. Տարբերել ուղղահայացը, թեքը և թեքի պրոյեկցիան և կազմել ճիշտ համապատասխանություն:
4. Սահմանել կետի հեռավորությունը հարթությունից:
5. Կիրառելով Պյութագորասի թեորեմը՝ գտնել ուղղահայացի երկարությունը:

8.2. Երեք ուղղահայացների մասին թեորեմը

թեմատիկ պլան

Առաջադրանք առարկայի չափորոշչային **նվազագույն** պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ըստ գծագրի տվյալների՝ լրացնել բաց թողնված բառերը:




- 1) CB-ն α հարթությանը համար _____ է: 2)
 CA-ն α հարթությանը համար _____ է:
 3) BA- α հարթությանը համար _____ է:

2. Համառոտ գրառել վերը պատկերված նկարում առկա մաթեմատիկական փաստերը:
3. Լրացնել երեք ուղղահայացների մասին թեորեմում բաց թողնված բառերը:

Հարթության մեջ թեքի հիմքով անցնող ուղիղն ուղղահայաց է թեքին այն և միայն այն դեպքում, երբ ուղղահայաց է այդ _____
 _____:

4. Ըստ գծագրի

պարզել, պնդումը ճիշտ է, թե սխալ:



a ուղիղը

ուղղահայաց է (ABC)
 հարթությանը:

- Ճիշտ է
- Սխալ է

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հարթությանը չպատկանող կետից հարթությանը տարված ուղղահայացի, թեքերի և նրանց պրոյեկցիաների ճիշտ պատկերումը:
2. Երկրաչափության մեջ համառոտագրման համար օգտագործվող նշանները:

3. Երեք ուղղահայացների մասին թեորեմի ձևակերպումը: 4. Ուղղի և հարթության ուղղահայացության հայտանիշը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.


1. Տարբերել ուղղահայացը, թեքը և թեքի պրոյեկցիան:
2. Կիրառելով համառոտագրության համար օգտագործվող նշանները՝ համառոտագրել երկրաչափական փաստերը:
3. Գիտենալով երեք ուղղահայացների մասին թեորեմի ձևակերպումը՝ նրանում կատարել բաց թողնված մասի լրացում:
4. Կիրառել ուղղի և հարթության ուղղահայացության հայտանիշը:

9.1. Ուղղահայացությունը երկրաչափական կառուցումներում. թեմատիկ պլան

Առաջադրանք առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.


1. Գտնել տվյալ պնդմանը համապատասխանող գծագրումը:

Եթե երկու զուգահեռ հարթություններից մեկն ուղղահայց է տրված ուղղին, ապա մյուսը ևս ուղղահայաց է այդ ուղղին:



2. Գտնել տվյալ պնդմանը համապատասխանող գծագրումը:

Եթե երկու ուղիղներից յուրաքանչյուրն ուղղահայաց է նույն հարթությանը, ապա այդ ուղիղները զուգահեռ են:



3. Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ:

- 1) Եթե երկու զուգահեռ հարթություններից մեկն ուղղահայց է տրված ուղղին, ապա մյուսը զուգահեռ է այդ ուղղին:
- 2) Եթե երկու զուգահեռ հարթություններից մեկն ուղղահայց է տրված ուղղին, ապա մյուսը ևս ուղղահայաց է այդ ուղղին:
- 3) Եթե երկու ուղիղներից յուրաքանչյուրն ուղղահայաց է նույն հարթությանը, ապա այդ ուղիղները միմյանց ուղղահայաց են:
- 4) Եթե երկու ուղիղներից յուրաքանչյուրն ուղղահայաց է նույն հարթությանը, ապա այդ ուղիղները զուգահեռ են:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երկու զուգահեռ հարթությունների՝ միևնույն ուղղին միաժամանակ ուղղահայաց լինելու փաստը:
2. Երկու զուգահեռ ուղիղների՝ միևնույն հարթությանը միաժամանակ ուղղահայաց լինելու փաստը:
3. Զուգահեռ ուղիղների և զուգահեռ հարթությունների վերաբերյալ ուղղահայացության պնդումները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերել այն գծագրումը, որը բնութագրում է երկու զուգահեռ հարթությունների՝ միևնույն ուղղին միաժամանակ ուղղահայաց լինելու փաստը:
2. Տարբերել այն գծագրումը, որը բնութագրում է երկու զուգահեռ ուղիղների՝ միևնույն հարթությանը միաժամանակ ուղղահայաց լինելու փաստը:
3. Գիտենալով զուգահեռության և ուղղահայացության կապի մասին՝ կատարել ճիշտ պնդումների ընտրություն:

9.2. Զուգահեռ հարթությունների հեռավորությունը


թեմատիկ պլան

Առաջադրանք առարկայի չափորոշչային **նվազագույն** պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Հետևյալ պնդման մեջ լրացնել բաց թողնված բառը:

Երկու զուգահեռ հարթություններից մեկի բոլոր կետերը
 _____ են մյուս հարթությունից:

2. Դիցուք տրված են α և β զուգահեռ հարթությունները: α հարթության մեջ ընկած A , B և C կետերից տարված են β հարթությանը համապատասխանաբար AA_1 , BB_1 , CC_1 ուղղահայացները: Ի՞նչ կարելի է ասել նրանց երկարությունների մասին:



- 1) $AA_1 = BB_1 > CC_1$
- 2) $AA_1 = BB_1 = CC_1$
- 3) $AA_1 < BB_1 < CC_1$
- 4) $AA_1 > BB_1 > CC_1$
- 5) $AA_1 > BB_1 < CC_1$


3. Ի՞նչ բառ պետք է գրել բաց թողնված բառի փոխարեն, որպեսզի սահմանումը ճիշտ լինի:

_____ հարթությունների հեռավորություն կոչվում է հարթություններից մեկի կամայական կետի հեռավորությունը մյուս հարթությունից:

- 1) Հատվող
- 2) Փոխուղղահայաց
- 3) Զուգահեռ

4. Լուծել խնդիրը:

Դիցուք տրված է $ABCD A_1 B_1 C_1 D_1$ խորանարդը, որի կողի երկարությունը 7 սմ է: Գտնել $ABCD$ և $A_1 B_1 C_1 D_1$ հարթությունների հեռավորությունը:



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է **խմանա**.

1. Երկու զուգահեռ հարթություններից մեկի բոլոր կետերի հավասարահեռ լինելը մյուս հարթությունից:
2. Երկու զուգահեռ հարթություններից մեկի բոլոր կետերի հավասարահեռ լինելը մյուս հարթությունից:
3. Չուգահեռ հարթությունների հեռավորության սահմանումը:
4. Չուգահեռ հարթությունների հեռավորությունը գտնելու հաշվեկանոնը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.


1. Գիտենալով զուգահեռ հարթությունների հեռավորության մասին՝ լրացնել պնդման մեջ բաց թողնված բառը:
2. Կիրառել «երկու զուգահեռ հարթություններից մեկի բոլոր կետերի հավասարահեռ լինելը մյուս հարթությունից» հատկությունը:
3. Ճիշտ լրացնել զուգահեռ հարթությունների հեռավորության սահմանման մեջ բաց թողնված բառը:
4. Խորանարդի համար որոշել երկու զուգահեռ նիստերի հեռավորությունը, եթե հայտնի է խորանարդի կողի երկարությունը:

10.1. Ուղղի և հարթության կազմած անկյունը

թեմատիկ պլան

Առաջադրանք առարկայի չափորոշային **նվազագույն** պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Դիցուք MB -ն ուղղահայաց է α հարթությանը, ընդ որում B -ն պատկանում է α հարթությանը: C կետը ևս պատկանում է α հարթությանը:



Հետևյալ պնդումներից n ըն է ճիշտ:

- 1) B կետը հանդիսանում է C կետի պրոյեկցիան:
- 2) C կետը հանդիսանում է B կետի


պրոյեկցիան:

- 3) C կետը հանդիսանում է M կետի պրոյեկցիան:
- 4) B կետը հանդիսանում է M կետի պրոյեկցիան:

2. Լրացնել սահմանումը:

Ուղղի և նրան հատող ու ոչ ուղղահայց հարթության կազմած անկյուն կոչվում է այդ ուղղի և _____ կազմած անկյունը:


3. Ըստ գծագրի նշել.




- 1) BA-ի և α հարթության կազմած անկյունը:
- 2) BC-ի և α հարթության կազմած անկյունը:

4. Լուծել խնդիրը:

A կետից α հարթությանը տարված են AO ուղղահայցը և AB թեքը: Գտնել AB-ի կազմած անկյունը α հարթության հետ, եթե $BO=5$ սմ, իսկ $AB=10$ սմ:



5. Լուծել խնդիրը:



Տրված է $ABCD A_1 B_1 C_1 D_1$

խորանարդը:

Գտնել AB_1 -ի և $ABCD$

հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հարթությանն ուղղահայաց ուղղին պատկանող յուրաքանչյուր կետի պրոյեկցիան ուղղի և հարթության հատման կետն է:
2. Ուղղի և հարթության կազմած անկյունը գտնելու սահմանումը:
3. Ուղղի և հարթության կազմած անկյունը գտնելու հաշվեկանոնը:
4. Ուղղի և հարթության կազմած անկյունը գտնելու հաշվեկանոնը , ինչպես նաև 30° -ի անկյան դիմացի էջի մասին հատկությունը:
5. Ուղղի և հարթության կազմած անկյունը գտնելու հաշվեկանոնը , ինչպես նաև հավասարասրուն ուղղանկյուն եռանկյան անկյունների աստիճանային չափերը:




Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Որոշել ուղղահայացին պատկանող կետերի պրոյեկցիաները:
2. Լրացնել ուղղի և հարթության կազմած անկյան սահմանումը:
3. Ըստ տրված գծագրի նշել ուղղի և հարթության կազմած անկյունը:
4. Օգտագործելով ուղղանկյուն եռանկյան հայտնի հատկությունը՝ գտնել ուղղի և հարթության կազմած անկյան աստիճանային չափը:
5. Գիտենալով հավասարասրուն ուղղանկյուն եռանկյան անկյունների աստիճանային չափերը՝ գտնել խորանարդի կողմնային նիստի անկյունագծի և հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:

§10.2 Երկնիստ անկյուն: Երկու հարթությունների կազմած անկյուն թեմատիկ պլան

Առաջադրանք առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Նշվածներից, ո՞րը չունի երկնիստ անկյան տեսք.



2. Համապատասխանեցնել՝ օգտվելով նկարից.

Գծային անկյուն

α

Կիսահարթություն a


Ընդհանուր ուղիղ

$\sphericalangle BCA$

Երկնիստ անկյուն a

Երկնիստ անկյան կող

$\sphericalangle(\alpha, \beta)$



3. Լրացնել բաց թողնված բառը.

Պատկերը, որը առաջանում է ընդհանուր սահմանագծով 2

կիսահարթություններից, որոնք գտնվում են տարբեր հարթությունների մեջ, անվանում են -----:

4. Գծային անկյան մեծությունը (կախված է, կախված չէ) նրա կողի վրա ընկած գագաթի ընտրությունից (ընտրել ճիշտ պատասխանը):


5. Լրացնել բաց թողնված բառը.

Երկնիստ անկյան մեծություն է կոչվում նրա ----- մեծությունը: 6.


Տրված է ուղղանկյունանիստ: Գտնել հետևյալ նիստերի կազմած անկյան աստիճանային չափը. a. AA_1B_1B և $ABCD$

b. AA_1B_1B և BB_1C_1C

c. AA_1D_1D և BB_1C_1C



7. Օգտվելով նկարից որոշել մյուս երկնիստ անկյան աստիճանային չափը:



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Երկնիստ անկյան տեսքը:
2. Երկնիստ անկյան տարրերը:
3. Երկնիստ անկյան սահմանումը:
4. Գծային անկյան մեծությունը կախված չէ անկյան գագաթի ընտրությունից:
5. Գծային անկյան սահմանումը:
6. Ուղղանկյունանիստի նիստերի փոխդասավորությունը:
7. Թե ինչպե՞ս են որոշում երկնիստ անկյան աստիճանային չափը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերակել երկնիստ անկյան տեսքը:
2. Ըստ գծագրի համապատասխանեցնել երկնիստ անկյան տարրերը:

3. Լրացնել երկնիստ անկյան սահմանումը:
4. Ընտրել համապատասխան բառը:
5. Լրացնել գծային անկյան սահմանումը:
6. Ուղղանկյունանիստի նիստերի փոխդասավորությունից ելնելով՝ որոշել երկնիստ անկյան աստիճանային չափը:
7. Ելնելով նկարից՝ որոշել երկնիստ անկյան աստիճանային չափը:

§11 Ուղղահայաց հարթություններ

[թեմատիկ պլան](#)




§11.1 Հարթությունների ուղղահայացությունը

Առաջադրանք առարկայի չափորոշչային **նվազագույն** պահանջների

կատարումը ստուգելու համար.

1. Երկու հարթություններ կլինեն ուղղահայաց, եթե նրանց հատումից առաջացած չորս երկնիստ անկյունները լինեն a. գուգահեռ,
 - b. 90°
 - c. 60°
 - d. 45°

2. Երկու հատվող հարթություններ կոչվում են -----, եթե նրանց կազմած անկյունը ուղիղ անկյուն է: 3. Կազմել համապատասխան գույգեր:



$$\alpha \cap \beta = a, \gamma \perp a \Rightarrow \gamma \perp \alpha, \gamma \perp \beta$$

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հարթությունների ուղղահայացության սահմանումը:
2. Հարթությունների ուղղահայացության սահմանումը:
3. Հարթությունների ուղղահայացության հայտանիշները:



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կիրառել հարթությունների ուղղահայացության սահմանումը:
2. Լրացնել հարթությունների ուղղահայացության սահմանումը:

3. Նկարներից կազմել համապատասխան գույգեր՝ ըստ հայտանիշների: §11.2
Ուղղանկյունանիստ թեմատիկ պլան

Առաջադրանք առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների
կատարումը ստուգելու համար.

1. Նշվածներից որո՞նք չունեն ուղղանկյունանիստի տեսք.



ա

բ

գ

դ

ե

2. Այն ուղիղ գուգահեռանիստը, որի հիմքերն ուղղանկյուններ են, կոչվում է -----:

3. Ուղղանկյունանիստի նիստերը իրենցից ներկայացնում են՝
- գուգահեռագծեր,
 - ուղղանկյուններ,
 - եռանկյուններ,
 - շրջաններ:

4. Ուղղանկյունանիստն ունի՝
- 6 նիստ, 8 գագաթ, 8 կող, 4 անկյունագիծ
 - 6 նիստ, 8 գագաթ, 12 կող, 4 անկյունագիծ
 - 4 նիստ, 8 գագաթ, 8 կող, 2 անկյունագիծ
 - 3 նիստ, 6 գագաթ, 12 կող, 4 անկյունագիծ:


5. Ուղղանկյունանիստը, որի երեք չափսերը հավասար են կոչվում է ----- --:

6. Ընտրել ճշմարիտ պնդումները.
- Ուղղանկյունանիստի բոլոր կողմնային կողերը հավասար են:
 - Ուղղանկյունանիստի հանդիպակաձ նիստերը գուգահեռ են:
 - Ուղղանկյունանիստի հիմքերը միմյանց հավասար ուղղանկյուններ են:
 - Ուղղանկյունանիստի յուրաքանչյուր գագաթից դուրս է գալիս 2 կող:

7. Տրված է ABCD₁B₁C₁D₁ ուղղանկյունանիստը, որի չափսերն են AB = 3սմ, AD = 4սմ, A E = 5սմ:

Որոշել.

- a. BD -ն,
- b. $AEFD$ նիստի մակերեսը:



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է **իմանա**.

1. Թե, ո՞ր մարմիններն ունեն ուղղանկյունանիստի տեսք:
2. Ուղղանկյունանիստի սահմանումը:
3. Թե ուղղանկյունանիստի նիստերը ի՞նչ բազմանկյուններ են:
4. Ուղղանկյունանիստի նիստերի, գագաթների, կողերի և անկյունագծերի քանակը:
5. Խորանարդի սահմանումը:
6. Ուղղանկյունանիստ հասկացությունը:
7. Պյութագորասի թեորեմը, և ինչպե՞ս հաշվել ուղղանկյան մակերեսը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է **կարողանա**.

1. Ուղղանկյունանիստի տեսք ունեցող մարմինները տարբերակել մյուս մարմիններից:
2. Լրացնել ուղղանկյունանիստի սահմանումը:
3. Ընտրել ուղղանկյունանիստի նիստերի ինչպիսի երկրաչափական պատկեր լինելը:
4. Նշված տարբերակներից ճիշտ ընտրել ուղղանկյունանիստի նիստերի, գագաթների, կողերի և անկյունագծերի թիվը:
5. Սահմանել խորանարդի սահմանումը:
6. Ելնելով ուղղանկյունանիստի հասկացությունից՝ որոշել ճշմարիտ պնդումները:
7. Կիրառել Պյութագորասի թեորեմը և ուղղանկյան մակերեսի հաշվման բանաձևը:


§12 Պրիզմա

թեմատիկ պլան

§12.1 Գաղափար բազմանիստի մասին

Առաջադրանք առարկայի չափորոշչային **նվազագույն** պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Նշվածներից որո՞նք չունեն բազմանիստի տեսք.



2. Ընտրել կեղծ պնդումները.

- Բազմանիստի հարևան նիստերը մի հարթության մեջ չեն գտնվում:
- Բազմանիստի հիմքը կարող է լինել շրջան:
- Բազմանիստը կարող է ունենալ ամենաքիչը երեք գագաթ:
- Քառանիստը ունի 4 կող:
- Խորանարդի բոլոր նիստերը քառակուսիներ են:

3. Նվազագույնը քանի՞ գագաթ, կող և նիստ կարող է ունենալ բազմանիստը:


4. Քանի՞ անկյունագիծ ունի զուգանեռանիստը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.


- Թե ո՞ր մարմիններն ունեն բազմանիստի տեսք:
- Բազմանիստի հասկացությունը:
- Բազմանիստի հասկացությունը:
- Բազմանիստի անկյունագծի սահմանումը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տրված մարմիններից առանձնացնել բազմանիստի տեսք ունեցող մարմինները:
2. Ելնելով բազմանիստի սահմանումից՝ ընտրել կեղծ պնդումները:
3. Ելնելով բազմանիստի սահմանումից՝ որոշել, թե՞ նվազագույնը քանի՞ գագաթ, կող և նիստ կարող է ունենալ բազմանիստը: 4. Որոշել գուգահեռանիստի անկյունագծերի թիվը:



5. Ընտրել այն պրիզման, որը անկյունագիծ չունի:



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ի՞նչ տեսք ունի պրիզման:
2. Պրիզմայի հասկացությունը:
3. Ուղիղ պրիզմայի կողմնային կողերը հավասար են բարձրությանը:
4. Պրիզմայի տարրերը:
5. Պրիզմայի անկյունագծի սահմանումը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերել պրիզման մյուս մարմիններից:
2. Ելնելով պրիզմայի հասկացությունից՝ նշել ճշմարիտ պնդումները:

3. Նշել, որ ուղիղ պրիզմայի բարձրությունը և կողմնային կողերը հավասար են:
4. Օգտվելով նկարից՝ որոշել պրիզմայի գագաթը, կողը, բարձրությունը, հիմքը, անկյունագիծը և կողմնային նիստը:
5. Կիրառելով պրիզմայի անկյունագծի սահմանումը՝ որոշել նշվածներից որը՝ անկյունագիծ չունի:


§12.3 Պրիզմայի մակերևույթի մակերես

Առաջադրանք առարկայի չափորոշչային **նվազագույն** պահանջների

կատարումը ստուգելու համար.


1. Ո՞ր բանաձևով է որոշվում պրիզմայի լրիվ մակերևույթի մակերեսը. a. $S_{լր} = S_h + S_լ$
 b. $S_{լր} = 2S_h + S_լ$
 c. $S_{լր} = S_h + 2S_լ$
 d. $S_{լր} = 2S_h + 2S_լ$
2. Ուղիղ պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսը հավասար է պրիզմայի ----- և ----- պարագծի արտադրյալին:
3. Լուծել խնդիրը.

Տրված գծագրին համապատասխան որոշել կողմնային մակերևույթի մակերեսը.



4. Լուծել խնդիրը.

Տրված գծագրին համապատասխան որոշել լրիվ մակերևույթի մակերեսը.



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Պրիզմայի լրիվ մակերևույթի մակերեսի հաշվման բանաձևը:
2. Ուղիղ պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսի որոշման բանաձևը:
3. Ուղիղ պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսի հաշվման բանաձևը:
4. Ուղիղ պրիզմայի լրիվ մակերևույթի մակերեսի հաշվման բանաձևը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տրվածներից ընտրել պրիզմայի լրիվ մակերևույթի մակերեսի հաշվման բանաձևը:
2. Լրացնել ուղիղ պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսի որոշման կանոնը:
3. Կիրառել ուղիղ պրիզմայի կողմնային մակերևույթի մակերեսի հաշվման բանաձևը (կամ համապատասխան նիստերի մակերեսները հաշվել և գումարել):
4. Կիրառել ուղիղ պրիզմայի լրիվ մակերևույթի մակերեսի հաշվման բանաձևը (կամ համապատասխան նիստերի մակերեսները հաշվել և գումարել):

§13Բուրգ


թեմատիկ պլան

§13.1 Բուրգի հասկացությունը

Առաջադրանք առարկայի չափորոշչային **նվազագույն** պահանջների

կատարումը ստուգելու համար. 1.

Նշվածներից որը^օ բուրգ չէ.




2. Բուրգը այն (բազմանկյունն է, բազմանիստն է), որի նիստերից մեկը որևէ բազմանկյուն է, իսկ մյուս բոլոր նիստերը ընդհանուր գագաթով


(քառանկյուններ, եռանկյուններ) են: (Ընտրել համապատասխան բառերը):

3. Կազմել համապատասխանություն.


Հիմք	E
Գագաթ	EG
Հիմքի կողմ	ED
Կողմնային կող	ABCD
Բարձրություն	DEC
Կողմնային նիստ	EF



3. Տրված բուրգի համար որոշել գագաթների, նիստերի և կողերի թիվը:



4. Անվանել բուրգը.



Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Ի՞նչ տեսք ունեն բուրգերը:
2. Բուրգի սահմանումը:
3. Բուրգի տարրերը:
4. Բուրգի գագաթների, նիստերի և կողերի քանակը:
5. Ելնելով հիմքի բազմանկյունից՝ ինչպե՞ս են անվանում բուրգը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տրված մարմիններից առանձնացնել բուրգի տեսք չունեցող մարմինը:
2. Բուրգի սահմանման մեջ տեղադրել համապատասխան բառերը:
3. Օգտվելով նկարից ճիշտ համապատասխանեցնել բուրգի տարրերը:
4. Հաշվել բուրգի գագաթների, նիստերի և կողերի թիվը:
5. Հիմքի բազմանկյան միջոցով՝ որոշել բուրգի անվանումը:

§13.2 Կանոնավոր բուրգ

թեմատիկ պլան

Առաջադրանք առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ո՞ր բուրգն է կոչվում կանոնավոր:
2. Ո՞րն է կոչվում բուրգի հարթագիծ:
3. Ե՞նչ կանոնավոր բուրգի օրինակներ:

4. Ընտրել կեղծ պնդումները.
 - a. Կանոնավոր բուրգի բոլոր կողմնային կողերը հավասար են:
 - b. Կանոնավոր բուրգի գագաթի պրոյեկցիան համընկնում է հիմքի բազմանկյան գագաթի հետ:
 - c. Կանոնավոր բուրգի կողմնային կողերը հիմքի հարթության նկատմամբ թեքված են նույն անկյան տակ:
 - d. Կանոնավոր բուրգի կողմնային նիստերը հավասարասրուն եռանկյուններ են:
 - e. Կանոնավոր բուրգի կողմնային նիստերը հավասարասրուն եռանկյուններ են և հավասար են հիմքին:
 - f. Կանոնավոր բուրգի բոլոր հարթագծերը հավասար են կողմնային կողին:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Կանոնավոր բուրգի սահմանումը:
2. Բուրգի հարթագծի սահմանումը:
3. Տեսրաեղրը, ինչպես նաև Եզիպտական բուրգերը կանոնավոր բուրգեր են:
4. Կանոնավոր բուրգի հատկությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Ձևակերպել կանոնավոր բուրգի սահմանումը:
2. Ձևակերպել բուրգի հարթագծի սահմանումը:
3. Առօրյա կյանքից բերել կանոնավոր բուրգի օրինակներ:
4. Կիրառելով կանոնավոր բուրգի հատկությունները՝ որոշել կեղծ պնդումները:





§13.3 Հատած բուրգ

թեմատիկ պլան

Առաջադրանք առարկայի չափորոշչային **նվազագույն** պահանջների

կատարումը ստուգելու համար. 1.

Նշվածներից որը^օ հատած բուրգ չէ:



2. Ո՞ր բանաձևով է որոշվում հատած բուրգի լրիվ մակերևույթի մակերեսը. a. $S = S_1 + S_2 + S_l$

b. $S = 2S_1 + S_2 + S_l$

c. $S = S_1 + S_l$

d. $S = S_1 + S_2 + 2S_l$

3. Քառանկյուն հատած բուրգը քանի՞ գագաթ, նիստ, կող ունի:

4. Ե՞րբ է հատած բուրգը կանոնավոր:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Հատած բուրգի տեսքը:
2. Հատած բուրգի լրիվ մակերևույթի մակերեսի հաշվման բանաձևը:
3. n-անկյուն հատած բուրգի գագաթների, նիստերի և կողերի հաշվման կանոնը (կամ գծագրի միջոցով հաշվել քառանկյուն հատած բուրգի գագաթների, նիստերի, կողերի թիվը):
4. Կանոնավոր հատած բուրգի սահմանումը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Տարբերել հատած բուրգը մյուս մարմիններից:
2. Նշվածներից ընտրել հատած բուրգի լրիվ մակերևույթի մակերեսի բանաձևը:
3. Կիրառել n-անկյուն հատած բուրգի գագաթների, նիստերի և կողերի հաշվման կանոնը (կամ գծագրի միջոցով կարողանա հաշվել քառանկյուն հատած բուրգի գագաթների, նիստերի, կողերի թիվը):


4. Ձևակերպել կանոնավոր հատած բուրգի սահմանումը:

§14.1 Պլատոնական մարմիններ

Թեմատիկ պլան


Առաջադրանք առարկայի չափորոշային **նվազագույն** պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ի՞նչ հատկանիշներով են ժտված կանոնական բազմանիստերը:
2. Նշվածներից n -րդ կանոնական բազմանիստ չէ.



3. Կազմել համապատասխանություն.


Քառանիստ (տետրաէդր)




Վեցանիստ (հեկսաէդր, խորանարդ)




Ութանիստ (օկտաէդր)



Տասներկուանիստ (դոդեկաէդր)



Քսանանիստ (իկոսաէդր):



4. Համապատասխանեցնել.

Քառանիստ	6 նիստ, 8 զագաթ, 12 կող
Վեցանիստ	4 նիստ, 4 զագաթ, 6 կող
Ութանիստ	12 նիստ, 20 զագաթ, 30 կող
Տասներկուանիստ	20 նիստ, 12 զագաթ, 30 կող
Քսանանիստ	8 նիստ, 6 զագաթ, 12 կող

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է **իմանա**.

1. Կանոնավոր բազմանիստի սահմանումը:
2. Կանոնավոր բազմանիստերի տեսքը:
3. Կանոնավոր բազմանիստերի անունները:
4. Կանոնավոր բազմանիստերի նիստերի, զագաթների և կողերի թիվը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է **կարողանա**.


1. Նշել կանոնական բազմանիստի հատկությունները:
2. Կանոնական բազմանիստերը տարբերել այլ մարմիններից:
3. Ճիշտ համապատասխանանեցնել կանոնական բազմանիստերի անվանումները պատկերումներին:
4. Կանոնավոր բազմանիստերի անունները ճիշտ համապատասխանանեցնել ըստ նիստերի, զագաթների և կողերի թվի:

§14.2 Կենտրոնային, առանցքային և հայելային համաչափություններ

թեմատիկ պլան

Առաջադրանք առարկայի չափորոշչային **նվազագույն** պահանջների կատարումը ստուգելու համար.

1. Ընտրել համաչափ կետերի զույգերը և նշել n° կետի նկատմամբ է համաչափ:



2. Ջուգահեռանիստի համար n° կետն է հանդիսանում կենտրոնային համաչափության կենտրոն:
3. Նշվածներից որո՞նք չունեն կենտրոնային համաչափություն.
 - a. Երկնիստ անկյուն,
 - b. Եռանկյուն պրիզմա,
 - c. Կամայական բուրգ,
 - d. Խորանարդ,
 - e. Կանոնական ութանիստ,
 - f. Կանոնավոր վեցանկյուն պրիզմա:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

1. Թ՞ե ինչ է կենտրոնային համաչափությունը:
2. Թ՞ե ինչ է պատկերի համաչափության կենտրոնը:
3. Թ՞ե ինչ է պատկերի համաչափության կենտրոնը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

1. Կենտրոնային համաչափության միջոցով գտնել համաչափ կետերի զույգերը:
2. Պատկերի համաչափության կենտրոնի միջոցով որոշել Ջուգահեռանիստի կենտրոնային համաչափությունը:
3. Նշվածներից առանձնացնել կենտրոնային համաչափություն ունեցող պատկերները:

§14.3 Համաչափությունները բնության մեջ, արվեստում, տեխնիկայում

թեմատիկ պլան

Առաջադրանք առարկայի չափորոշչային **նվազագույն** պահանջների

կատարումը ստուգելու համար.

1. Յուրաքանչյուր պատկերի համար նշել նրա համաչափության առանցքը:



2. Հաշվել կանոնական վեցանիստի անկյունագծերի թիվը:
3. Ընտրել ճշմարիտ պնդումները.
- a. Կանոնավոր եռանկյուն բուրգը կանոնական քառանիստ է,
 - b. Կանոնական քառանիստը կանոնավոր եռանկյուն բուրգ է,
 - c. Ուղղանկյունանիստը, որի բոլոր կողերը հավասար են, կանոնական վեցանիստ է,
 - d. Եթե եռանկյուն բուրգի բոլոր կողմնային նիստերը հավասարակողմ եռանկյուններ են, ապա այն կանոնական քառանիստ է,
 - e. Եթե քառանկյուն պրիզմայի բոլոր կողմնային նիստերը կանոնավոր քառանկյուններ են, ապա այն կանոնական վեցանիստ է:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.

- 1. Թե ի՞նչ է առանցքային համաչափությունը:
- 2. Կանոնական վեցանիստի անկյունագծերի թվի հաշվումը:
- 3. Կանոնական տասներկուանիստի անկյունագծերի թվի հաշվումը:
- 4. Կանոնավոր բազմանիստերի հատկությունները:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.

- 1. Տանել պատկերի համար համաչափության առանցք:
- 2. Ճիշտ հաշվել կանոնական վեցանիստի անկյունագծերի թիվը:
- 3. Ճիշտ հաշվել կանոնական տասներկուանիստի անկյունագծերի թիվը: 4. Կիրառելով կանոնավոր բազմանիստի հատկությունները ընտրել ճշմարիտ պնդումները:

Օգտագործված գրականություն՝ Երկրաչափություն

Որոշ նկարներ վերցրել ենք համացանցից՝ 1. <https://hy.wikipedia.org/>

2. <https://mathnet.am/>

3. <https://www.imdproc.am/>

4. <http://www.reading.ge/>

5. <https://irecommend.ru/>

Իսկ նկարների հիմնական մասը գծագրել ենք մենք ինքներս կիրառելով հետևյալ գործիքները

1. GeoGebra,

2. Smart Notebook,

3. Woed: